

**Սույն թվականի մայիսի 10-ին տեղի ունեցավ մանկապատանեկան հանձնաժողովի հերթական նիստը, որտեղ քննարկվեցին հետևյալ հարցերը.**

1. Հայաստանի պատանիների և աղջիկների մինչև 18 տարեկանների 2011թ. առաջնության ամփոփում
2. Աշխարհի և Եվրոպայի մինչև 18 տարեկանների պատանիների և աղջիկների առաջնությանը մարզիկների և մարզիչների մասնակցությունը
3. Աշխարհի 20 տարեկանների առաջնության մասնակցությունը
4. Մինչև 16 տարեկանների շախմատի օլիմպիադայի հիմնական կազմի որոշումը

1. Հայաստանի պատանիների և աղջիկների մինչև 18 տարեկանների 2012թ. առաջնության հետ կապված`

- Առաջարկվեց ավելացնել ընտրական փուլերի միջև եղած ժամանակը
- Ցույց տրված արդյունքների համաձայն ավելացնել կամ պակասեցնել մարզերին և Երևանին տրվող անհատական տեղերի քանակը
- Հայաստանի պատանիների մինչև 18 տարեկանների 2012թ. առաջնության կիսաեզրափակիչ փուլին մասնակցության իրավունք տալ բարձր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստներին
- Վերանայել Հայաստանի 10-18տ. աղջիկների առաջնության եզրափակիչ փուլին տրվող անհատական տեղերը

2. Աշխարհի և Եվրոպայի մինչև 18 տարեկանների պատանիների և աղջիկների առաջնությանը մարզիկների և մարզիչների մասնակցության հետ կապված`

- Աշխարհի առաջնություն ուղարկել Սամվել Տեր-Սահակյանին, Հովհաննես Գաբուզյանին, Ռոբերտ Աղասարյանին, Կարեն Գրիգորյանին, մարզիչ` Արտաշես Մինասյանին:
- Հայաստանի մինչև 18տարեկանների առաջնության մյուս 1-2 մրցանակակիրներին ուղարկել Եվրոպայի առաջնություն` մարզիչներ Արտաշես Մինասյանի, Արսեն Եղիազարյանի, Վահագն Խաչատրյանի, Յուրի Համբարձումյանի և Արարատ Սանթրյանի ուղեկցությամբ:

3. Աշխարհի 20 տարեկանների առաջնության հետ կապված`

Որոշվեց Աշխարհի միջև 20 տարեկանների պատանիների և աղջիկների առաջնություն ուղարկել Սամվել Տեր-Սահակյանին, Ռոբերտ Հովհաննիսյանին, Մարիա Գևորգյանին և մարզիչ Արտաշես Մինասյանին:

4. Մինչև 16 տարեկանների շախմատի օլիմպիադայի հիմնական կազմը որոշվում է հետևյալ կերպ.

Մասնակցության իրավունք ունեն սույն թվականի մինչև 16 տարեկանների Հայաստանի չեմպիոնը և ամենաբարձր միջազգային վարկանիշ ունեցող 3 շախմատիստները (մայիսի 1-ի հաշվարկով): Պահեստային խաղացողի ընտրությունը կատարվում է մանկապատանեկան հանձնաժողովի որոշմամբ:

**Մանկապատանեկան հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց Հայաստանի շախմատի ֆեդերացիայի հետևյալ որոշման մասին՝**

1. Հայաստանի շախմատի ֆեդերացիան Աշխարհի և Եվրոպայի մինչև 18 տարեկանների պատանիների և աղջիկների առաջնության մրցանակակիրների (1-3 տեղեր) և նրանց մարզիչների պարգևատրումը սահմանել է հետևյալ կերպ.

**Մինչև 18տ. Աշխարհի առաջնություն (մարզիկ/մարզիչ յուրաքանչյուրին).**

1-ին տեղ – 500 000 դրամ

2-րդ տեղ – 300 000 դրամ

3-րդ տեղ – 250 000 դրամ

**Մինչև 18տ. Եվրոպայի առաջնություն**

1-ին տեղ - 400 000դրամ

2-րդ տեղ - 250 000դրամ

3-րդ տեղ - 200 000դրամ